ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

"ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ"
ՓԲԸ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ

"ГАВАРИ БЖШКАКАН
КЕНТРОН" ЗАО

<< Գեղարքունիքի մարզ ք. Գավառ,Ազատության 21,հեռ. (+37264 2-33-53) ֆաքս (0264 2-33-53)
РА, Гегаркуниская область, г. Гавар, ул. Азатутяна 21, тел. (+37264 2-33-53.) gavaribk@mail.ru

07 – 237D
14.08.20թ

<<Արիդա թրեյդ>> ՍՊԸ –ի
տնօրեն Է. Փոթոյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հարգելի պարոն Է.Փոթոյան

Համաձայն <<Գավառի ԲԿ» ՓԲԸ-ի հետ 26.02.2020թ կնքված N ԳԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/6-1 պայմանագրի 1.1 կետի Վաճառողը պարտավորվում է, սույն պայմանագրերով (այսուհետ Պայմանագեր) սահմանված կարգով , ծավալներով , ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրերի N1 հավելվածներով Տեխնիկական բնութագիր գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում , եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են __5 օրացուցային_ օրից ավելի,

Գնորդի կողմից 05.08.2020թ ապրանքի մատակարարման պատվեր ուղարկվել է էլեկտրոնային 101-րդ չափաբաժնի / **հեպարին**/ համար:

Սակայն Ձեր կողմից ապրանքը չի մատակարարվել և Ձեր կողմից խախտվել է ապրանքների մատակարարման ժամկետը, ընդ որում մի քանի անգամ:

Ձեր ուղարկած գրավոր պարզաբանումը հիմք չի համարվում, քանի-որ չունենք այլ մասնակիցներ որոնց հետ մենք ունենանք պայմանագրի լուծարման խնդիր:

Այսպիսով հարգելի գործընկեր <<Գավառի ԲԿ>> ՓԲԸ-ն լուծարում է **ՈԳԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/6-1** ծածկագրով 101-րդ չափաբաժին՝ հեպարին -1570 հատ

Նշված Պայմանագրերի 6.2 կետի համաձայն Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

Մեր կողմից Ձեզ ծանուցվել է վերոհիշյալ պայմանագրերի մասնակի լուծարման մասին Գնորդ ընկերությունը հրաժարվում է շարունակել Ձեզ հետ համագործակցությունը: Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն նշված չափաբաժնի համար համարել լուծարված սույն ծանուցումը ստանալու օրվանից և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թ մայիսի 4-ի N526-ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

<<Գավառի ԲԿ>> ՓԲԸ-ի տնօրեն՝ Ա. Կարապետյան

Сканировано с CamScanner